Յերակ դու չանկի եղար, զիս ի քո փէրտէդ սազեցիր.
Ա՛մ, զա՛րկ ու զանուշն ասա՛, երբ ի քո կըրակն երեցիր:

Դ.

Ասես թէ կաթով շաղոուած՝ այդ ճերմակ ծոցիկդ որ ունիս.
Ասես թ՚արեգակն ես դու, լոյս կուտաս ամէն ալամիս.
Շէքրին քէնըն դու ունիս, պուլպուլին ձայնով կու խօսիս.
Մուշկին փէրուարիշ կուտաս, քան ըզմուշկն անուշ հոտ ունիս:

Ե.

..... կանց կենայի.
Ձըմեռն ի ձընին միջին կենայի, դեռ քըրտընէի:
Երբ սէրն ի յիսնէ ելաւ, եօթընտակ մուշտակ կարեցի.
Ամառն ի թունտրեզերին կենայի, դեռ կու դողայի:

Զ.

Քո գունդ ինձ գինի պիտէր, խըմէի լուկ հարբենայի.
Ծոցիկդ Ադամայ դըրախտ, մըտնէի խընծոր քաղէի.
Յան խակ ծըծերուդ միջին մէկ պահիկ մի քուն լինայի.
Հոգեկ մ՚Աստուծոյ պարտիմ, նա յա՛յն ժամըն թող գայ տանի:

Է.

Այս աստըւնորիս վերայ Գըրօղին տընակն աւիրի՛.
Կայծիկ մի կրակ առնէի՛, զինք ու իր տընակն երէի.
Յամէն տարի յայս ատենս գով սիրեմ նա զայն կու տանի.
Վախեմ օր մի զիս տանի, կուտաման խելկացն որ ունի:

Ը.

Այս աստընւորիս վերայ սիրոյ տէրն, ա՛մ, ի՞նչ կու շահի.
Ըռուպ մի վաճառ կ՚անէ ու հազար դեկան կու զենի.
Ելնէ հօր ու մօր աչիչ, սրելեաց ամօթ աւելի.
Թափի յերեսի ջըրէն ՚ւ իր ոսկի անունն աւիրի:

Թ.

Մարդն որ սիրոյ տէր լինի, քունն ի հոն, ա՛մ, ի՞նչ բան ունի.
Ցորեկըն գիշեր թըւի ու գիշերն է երերմանի.
Ա՛մ, սէրըն հընցկուն պիտի, որ Աստուած ու մարդըն հաւնի.
Թէ չէ զասանկ այլ սէրըն՝ շունն ու գայլն, աղուէսն այլ ունի: